ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊՁԲ-2025/40-1»**

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար է;եկտրոնային աճուրդ ընթացակարգով սպիտակեղենի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊՁԲ-2025/40-1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 10-ին և ապրիլի 11-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 11-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրումներ N 1

Հարգելի Պատվիրատու խնդրում եմ պարզաբանել՝ 1. I չափաբաժնի ծրարի և սավանի չափսերը, չեն համապատասխանում ստանդարտներին, սովորաբար ծրարի չափսը պետք է լինի 150x215, սավան 160x215, նշված չէ կտորի խտությունը: 2. II չափաբաժնում նշվաշ սրբիչի չափսերը նույնպես շեղված են ստանդարտից: Համաձայն ստանդարտի չափսը պետք է լինի 50x90: Ինչպես նաև նշված չէ սրբիչի խտությունը: 3. III չափաբաժնում նույնպես առկա է չափսերի շեղում ստանդարտներից: Ընդունված ստանդարտներն են 70x140, 90x150, 100x160: Այստեղ ևս նշված չէ սրբիչի խտությունը:

Պարզաբանում N 1

I Անկողնային սպիտակեղենի հավաքածուն պետք է ներառի 1. ծրար՝ լայնությունը 145 սմ, երկարությունը՝ 210 սմ, ամբողջ լայնքով ոչ պակաս քան 18 սմ փականով, 2. սավան՝ լայնությունը 150 սմ, երկարությունը՝ 240 սմ, 3. բարձի երես՝ երկարությունը 90 սմ, լայնությունը՝ 50 սմ ամբողջ լայնքով ոչ պակաս քան 18 սմ փականով: Անկողնային հավաքածուն պետք է կարված լինի սատինից՝ սարժային հյուսվածքի բամբակյա գործվածք, պատրաստված օրգանիկ բամբակի մանրաթելերով, սպիտակ գույնի, կտորի խտությունը ոչ պակաս քան 135 գր/քմ, գործվացքը 40 x 40: II սրբիչներ խավավոր, 100 % բամբակյա, փոքր: Չափը՝ երկարություն՝ 90սմ, լայնություն 50սմ, խտությունը ոչ պակաս քան 450 գր./քմ: III սրբիչներ խավավոր, 100 % բամբակյա, մեծ: Չափը՝ երկարություն 140 սմ, լայնություն՝ 70 սմ, խտությունը ոչ պակաս քան 450 գր./քմ:

Հարցադրումներ N 2

Հարգելի Պատվիրատու, 2,3 չափաբաժիններով ձեռքբերման ենթակա սրբիչների մասով խնդրում ենք պարզաբանել գործվածքը պետք է լինի վաֆլենման թե խավավոր:

Պարզաբանում N 2

Սրբիչների գործվածքը պետք է լինի խավավոր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊՁԲ-2025/40-1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Այվազյանին:

Հեռախոս +374 99 04 12 92,
Էլ. փոստ legesgnumner@gmail.com
Պատվիրատու՝ **«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ**